ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

14.07.2012թ գ. Արգինա

ՀՀ Արմավիրի մարզի Արգինա համայնքի ղեկավարի 2012 թ առաջին Կիսամյանկի աշխատանքային գործունեության վերաբերյալ.

Արգինա համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հաշվետու ժողով
Ժողովին մասնակցում էին ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ Վարդգես Աբրահամյանը, ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ, գյուղապետարանի աշխատակիցներ:
Նախագահությամբ համայնքի ղեկավար Ռ. Արոյանի
Քարտուղարությամբ Ս. Հարությունյանի
Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավար Ռ. Արոյանը
Հարգելի հյուրեր, Արգինա համայնքի բնակիչներ.
Թույլ տվեք Ձեր ուշադրությունը հրավիրել իմ՝ համայնքի ղեկավարի , գյուղապետարանի աշխատակազմի կողմից 2012 թ առաջին կիսամյակում կատարած աշխատանքների մասին՝ ըստ համապատասխան բնագավառների.
Սոցիալական բնագավառում՝
Աշխատանքներ են տարվել ոռոգման ջրի ներքին փակ ցանցի վերանորոգման , համայնքի փողոցների պարբերական աղբաթափության ուղղությամբ:
Համայնքի մեկ ընտանիքի հատկացվել է միանվագ դրամական օգնություն՝ ծնողի անժամանակ մահվան կապակցությամբ:
Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել և անցկացվել է ավագանու երեք նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են համայնքին հուզող տարաբնույթ հարցեր, ընդունվել են որոշումներ և հետամուտ եղել դրանց կատարմանը:
Առաջին կիսամյանկի ընթացքում հավաքագրվել են՝
1. հողի հարկ 1703.2 հազար դրամ, գույքահարկ 49.8 հազար դրամ , տեղական տուրքեր՝ 39.6 հազար դրամ;
Կազմակերպվել և անցկացվել են անասունների հունվարյան հաշվառման, գույքագրման, ցանքերի հաշվառման վերաբերյալ, գարնանային զորակոչի աշխատանքները:
Արմավիրի մարզպետարան , ինչպես նաև տարբեր կազմակերպություններ են ուղարկվել շուրջ հիսուն տարաբնույթ գրություններ , հաշվետվություններ:
Քաղաքացիներից ստացվել են քսանից ավելի տարբեր դիմումներ, որոնք ստացել են իրենց դրական պատասխանները, ինչպես նաև տրամադրվել են հարյուրից ավելի տարբեր բնույթի տեղեկանքներ:
Համայնքի հիմնախնդիրներն են՝
Համայնքի թիվ մեկ խնդիր է հանդիսանում համայնքի տնամերձների ոռոգումը
Տնամերձները ոռոգվում են պոմպակայանից մղվող ջրով, ինչը գյուղին տրամադրվում է բավականին ուշ ժամկետներում, հաճախակի ընդհատումներով,

իսկ աշնան սկզբներին ընդհանրապես դադարեցվում է:
Գյուղի խմելաջրի, ոռոգման ջրի ներքին փակ ցանցերը գտնվում են վթարային վիճակում, որի պատճառով մեծ են ջրի կորուստները, այդ իսկ պատճառով ենթակա են փոփոխման և վերանորոգման:
Համայնքը չունի մշակույթի տուն, գյուղապետարանի շենք, գազաֆիկացված չէ, փողոցները գտնվում են անբարեկարգ վիճակում, հաճախակի կարկտահարությունները մեծ վնասներ են պատճառում գյուղատնտեսական արտադրությանը:
Գյուղից մեծ թիվ են կազմում արտագնա աշխատանքի մեկնողները:

Արգինա համայնքի ղեկավար Ռ. Արոյան